

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԵՎ ԲԶԶԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան ՀՀ բարձրագույն գիտական ինքնակառավարվող պետական հաստատություն է՝ հիմնված Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ ԳԱԱ-ն ունի հատուկ կարգավիճակ. այն կազմակերպում, իրականացնում և համակարգում է հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ, որոնք անհրաժեշտ են գիտելիքահեն տնտեսության, հասարակական և մշակութային զարգացման համար: ՀՀ ԳԱԱ-ն միավորում է 34 գիտական ինստիտուտ, գիտատեխնոլոգիական կենտրոններ և այլ կազմակերպություններ:

ՀՀ ԳԱԱ գործողությունների հիմնական ուղղություններն ու խնդիրներն են հիմնարար և կիրառական հետազոտությունների կազմակերպումը, զարգացումը և համակարգումը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող գիտական և մանկավարժական կադրերի պատրաստումը մագիստրոսական, ասպիրանտական և դոկտորական\* ծրագրերի միջոցով:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը (ՄԿԻ) հիմնադրվել է 1966 թվականին՝ Հայաստանում մոլեկուլային կենսաբանության ոլորտում հետազոտությունների զարգացման նպատակով: Ներկայումս ՄԿԻ-ի գիտական հետազոտությունները ուղղված են բջջային ակտիվության կարգավորման մեխանիզմների, ինչպես նաև օրգանիզմի մի շարք պաթոլոգիական վիճակների, այդ թվում աուտաիմունային, աուտաբորբոքային, ուղեղանոթային, վարակիչ, քաղցկեղային հիվանդությունների և հոգեկան խանգարումների ուսումնասիրմանը:

Ինստիտուտում գործում են 18 գիտական բաժին (11 լաբորատորիա և 7 խումբ), 3 գիտակրթական ստորաբաժանում: Կիրառական մոլեկուլային կենսաբանության բաժնում ընդգրկված են 3 լաբորատորիա և 4 հետազոտական խումբ: ՄԿԻ-ում գործում է գիտական խորհուրդը, երիտասարդ գիտնականների խորհուրդը և էթիկայի կոմիտեն:

ՄԿԻ-ի ծառայողական և սպասարկող միավորներն են գրադարանը, մարդու ԴՆԹ նմուշների բանկը, բջջային գծերի հավաքածուն, կենդանանոցը և ներքին համակարգչային ցանցը:

---

\* Որոշ եվրոպական երկրներում, օր.՝ Գերմանիայում՝ **հաբիլիտացիա** (դոկտորի գիտական կոչում):

## 1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը կարևորում է մասնակցությունը կրթական գործընթացներում և հմուտ ու փորձառու գիտնականների պատրաստման գործում, որոնք նպաստում են գիտելիքահեն տնտեսության զարգացմանը Հայաստանում և ամբողջ աշխարհում: Այս գործողությունները հստակ սահմանված են ՄԿԻ-ի կանոնադրությամբ: Ինստիտուտը մագիստրոսական և ասպիրանտական կրթության ոլորտում առաջարկում է հստակ սահմանված բարձրորակ կրթական ծրագրեր, որոնք գոհացնում են հեռանկարային ուսանողների կարիքները՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները:

ՄԿԻ-ն ասպիրանտական ծրագրեր է առաջարկում «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» և «Գենետիկա» մասնագիտություններով, մագիստրոսական ծրագիր՝ «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» մասնագիտությամբ, դասընթացներ՝ «Կենսաինֆորմատիկա» և «Կենսաինժինեռիա» մասնագիտություններով: Բացի այդ, ՄԿԻ-ի աշխատակիցները պարբերաբար կազմակերպում են աշխատաժողովներ, ամառային դպրոցներ և սեմինարներ:

Ինստիտուտում գործում են հետազոտական առողջ միջավայր և մեխանիզմներ, որոնք շարունակաբար բարձրացնում են ասպիրանտական ծրագրերի որակը: Ավելին՝ ՄԿԻ ասպիրանտական ծրագրերը նախնական քայլեր են արդյունաբերության ոլորտում կամ ակադեմիական միջավայրում կարիերայի հետագա զարգացման համար:

Չնայած ՄԿԻ-ը գրանցել է հսկայական առաջընթաց ասպիրանտական կրթության որակի բարելավման ուղղությամբ, այնուամենայնիվ անհրաժեշտ է որոշ ռազմավարական գործողություններ իրականացնել՝ գործընթացին պաշտոնական բնույթ հաղորդելու համար: Նշված գործողությունները հիմնականում վերաբերում են ասպիրանտական ծրագրերում առկա կանոնակարգերի և ուղեցույցների մշակմանը, կանոնակարգմանն ու տարածմանը:

Կարիերայի զարգացման հիմնահարցերը հատկապես կարևոր են ՄԿԻ ասպիրանտական ծրագրերի համար: Հայաստանում աշխատաշուկան սահմանափակ է, այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել միջազգային կարիերայի ընձեռած հնարավորություններին:

Ներկա իրավիճակ	Քայլեր	Ցուցիչներ
<p>Կրթական ծրագրերն իրականացվում են իրավասու պետական մարմինների ուղեցույցների և հրամանների համաձայն:</p> <p>Առկա չեն սահմանված կանոնակարգերի վերաբերյալ տեղեկագրեր և ձեռնարկներ:</p>	<p>Մշակել ասպիրանտական կրթության տեղեկագիր և ձեռնարկ</p>	<p>Հրապարակայնորեն հասանելի տեղեկագիր և ձեռնարկ՝ ընդունված ինստիտուտի գիտական խորհրդի կողմից</p>
	<p>Կրթական գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տրամադրել ուսանողներին և գիտական ղեկավարներին</p>	
	<p>Ներպետական և միջազգային մասնագիտական աշխատատեղերի մասին տվյալների շտեմարան մշակել</p>	<p>Կայքում տեղադրված հղումներ՝ համապատասխան պետական մարմինների վեբկայքերին:</p> <p>Բոլոր փաստաթղթերի հասանելիություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով</p>

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ասպիրանտական կրթական գործընթացները իրականացվում են ՄԿԻ-ում և ՀՀ ԳԱԱ-ում գործող մի քանի կառույցների միասնական գործունեության շնորհիվ: ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը պատասխանատու է ընդունելության գործընթացի կազմակերպման համար՝ առաջնորդվելով համապատասխան պետական մարմինների կարգերով և հրամաններով: Կենտրոնը նաև կազմակերպում է ասպիրանտական ծրագրի կրթական կառուցամասը, իսկ ՄԿԻ գիտքարտուղարը և գիտխորհուրդը կազմակերպում են մասնագիտական քննությունների անցկացումը, գիտական ղեկավարների նշանակումը և ատենախոսության թեմաների հաստատումը, ինչպես նաև ուսումնական գործընթացի

գնահատումը և ավարտը: Բոլոր փաստաթղթերը հասանելի են հետևյալ հասցեով՝ [http://isec.am/index.php?category\\_id=4&blog\\_id=&lang=eng](http://isec.am/index.php?category_id=4&blog_id=&lang=eng):

### 3. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՄԿԻ-ն ունի 18 գիտահետազոտական միավոր (11 լաբորատորիա և 7 խումբ), ինչպես նաև 3 գիտակրթական ստորաբաժանում: Երեք լաբորատորիա և 4 գիտահետազոտական խումբ ներառված են կիրառական մոլեկուլային կենսաբանության բաժնում: ՄԿԻ-ում գործում են նաև գիտական խորհուրդը, երիտասարդ գիտնականների խորհուրդը և էթիկայի հանձնաժողովը: Օժանդակ ինստիտուցիոնալ միավորներն են մարդու ԴՆԹ նմուշների բանկը, բջջային գծերի հավաքածուն, կենդանանոցը և գրադարանը: Յուրաքանչյուր խմբի գիտահետազոտական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://molbiol.sci.am/resunits>:

ՀՀ ԳԱԱ-ն գործում է պետական ֆինանսավորման և ինքնակառավարման սկզբունքներով և հիմնարար ու կիրառական հետազոտություններ է իրականացնում կենսաբժշկական գիտությունների ամենակարևոր ուղղություններով, ինչպես նաև համակարգում է հանրապետությունում պետական բյուջեի միջոցներով իրականացվող հիմնարար հետազոտությունները:

ՀՀ կառավարությունը ՀՀ Գիտության պետական կոմիտեի ենթակառուցվածքների պահպանման և թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի միջոցով օժանդակում է ՄԿԻ հիմնական գործունեությանը: Բյուջեի զգալի մասը ձևավորվում է միջազգային գործակալությունների կողմից ֆինանսավորվող համագործակցային ծրագրերի միջոցով: Ֆինանսավորման ամբողջական աղբյուրները, ինչպես նաև ընթացիկ նախագծերի ցանկը հասանելի են հետևյալ հասցեով՝ <http://molbiol.sci.am/rdprojects>:

ՄԿԻ-ը խրախուսում է պոստենցիալ դեկավարների շարժունությունը գիտակրթական փոխանակման տարբեր ծրագրերով, ինչպես՝ «DAAD», «Ֆուլբրայթ», «Մարի Կյուրի» շարժունության գործողությունները, «Հորիզոն 2020» և «Էրազմուս+» ծրագրերը, խրախուսում է նաև համատեղ գիտական նախագծերը և գիտաժողովների մասնակցությունները: ՄԿԻ անձնակազմի զգալի մասը (~40%) վերապատրաստվել են միջազգային հայտնի գիտական կենտրոններում: ՄԿԻ համագործակցային ցանցը ներառում է ավելի քան 15 միջազգային

հանրահայտ գիտական կենտրոն: ՀՀ և օտարերկրյա գործընկերների ցուցակը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://molbiol.sci.am/collaboration>:

Ներկա իրավիճակ	Քայլեր	Ցուցիչներ
Ֆինանսավորումը և ռեսուրսների առկայությունը՝ որպես ծրագրի կատարման կարևորագույն պայմաններ: Ասպիրանտների դիմումը և մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին խրախուսվում է:	Յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել համապատասխան ռեսուրսներ	Ասպիրանտներ ընդգրկող ծրագրերի թիվը
		Համագործակցությունների թիվը ասպիրանտական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների օգտագործմամբ

#### 4. ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

Ակադեմիան պատրաստում է բարձրորակ գիտամանկավարժական կադրեր մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, ինչպես նաև հայցորդության միջոցով՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ նյութատեխնիկական միջոցները:

Նոր և յուրօրինակ գիտելիքի ստեղծումն ասպիրանտական կրթության հիմնական բաղադրիչն է: Հետևաբար Ակադեմիան աջակցում է հետևյալ հմտությունների և կարողությունների զարգացմանը՝

**1. Անհատական հետազոտության իրականացում, գիտական խնդիրների ինքնուրույն լուծում, մասնագիտական գիտելիքի ձեռքբերում, մասնակցություն թիմային աշխատանքներին հետազոտության միևնույն թեմայի շուրջ.**

- Հետազոտության ոլորտի անհրաժեշտ գիտելիք և ուսումնասիրվող թեմայի բավարար գիտելիք:

- Հետազոտության արդյունքների ներկայացում հոդվածներում, շնորհանդեսներ և/կամ թեզիսներ (բազային ֆինանսավորում ունեցող ծրագրերում ներառել նաև մագիստրատուրայի ուսանողներին):

- Վերլուծությունների, հարցումների, փաստահավաքների և գնահատումների իրականացում՝ զարգացնելու և ամրապնդելու համար վերլուծական ու քննադատական մտածողությունը:

- Տվյալների շտեմարաններից, վիճակագրական տվյալներից և համապատասխան գրականությունից օգտվելու կարողություն:

## **2. Ընդհանուր հմտությունների ձեռքբերում**

Ասպիրանտը պետք է՝

- Թիմային աշխատանքներում հաղորդակցվի հավասարակիցների հետ՝ խթանելով նրանց մասնակցությունը տարբեր սեմինարներին և գիտաժողովներին (պաստառները կամ զեկույցները պարտադիր են), սեփական հետազոտությունը ներկայացնելը կարևոր է, սակայն կենտրոնական է համարվում անհատական հետազոտության իրականացումը:

- Բուհի աջակցությամբ և սեփական նախաձեռնությամբ կազմակերպի սեմինարներ և այլ միջոցառումներ:

- Հաճախի դասախոսությունների. հետազոտողներին անհրաժեշտ է ձեռք բերել ակադեմիական գրագրության հմտություններ՝ տվյալ ոլորտում ամրապնդելով կարողությունները և գիտելիքները:

- Բուհը պետք է աջակցի ասպիրանտի հաղորդակցական և շնորհանդեսներ պատրաստելու հմտությունների զարգացմանը՝ ուսումնառության ընթացքում նմանատիպ հմտությունների զարգացմանն ուղղված հատուկ դասընթացներ առաջարկելու միջոցով:

## **3. Թիմային խմբերում աշխատելու հմտությունների ձեռքբերում, թիմի ղեկավարում և դրամահավաքության հմտություններ**

- Ասպիրանտ հետազոտողներին անհրաժեշտ է ղեկավարել ուսանողական խմբեր և զբաղվել մենտորությամբ՝ ամրապնդելով թիմային խմբերում աշխատելու կարողությունները և թիմի ղեկավարման հմտությունները:

- Բուհը տարբեր դրամաշնորհային առաջարկների մեխանիզմների շուրջ առաջարկում է սեմինարներ և կլոր-սեղան քննարկումներ՝ ներառելով հաջողված դրամաշնորհային ծրագրերի օրինակները, դրամաշնորհային ծրագրերին դիմելու զանազան տեսակները և ուղիները:

## **4. Դասավանդման, ղեկավարման և/կամ մենտորության հմտություններ**

- Հետազոտողների կողմից դասավանդվող պարտադիր դասընթացների միջոցով ասպիրանտական ծրագիրը հետազոտողներին տալիս է դասավանդման և այլ գործնական կարողություններ, ինչպես օրինակ՝ մենտորության կարողությունը:

## **5. Ինքնավարության, նախաձեռնության և ձեռներեցության հմտություններ**

- 6. Էթիկայի նորմերին համապատասխանող վարքագիծ, հուսալի գիտական պրակտիկա, կայունություն, պատասխանատվություն, մասնագիտական վարքագիծ

### **Ուսումնառության վերջում ասպիրանտը պետք է՝**

- գրավոր ներկայացնի և ինքնատիպ ու որակյալ հետազոտության միջոցով կիրառի նոր գիտելիք, որը կերաշխավորի հետազոտության հետագա հրատարակելիությունը,
- հասկանա և տիրապետի տվյալ մասնագիտության հիմնական և նորագույն գիտելիքին,
- կարողանա պատկերացնել, մշակել և իրականացնել ծրագիր նոր գիտելիքի ստեղծման, կիրառման կամ մասնագիտության ըմբռնման նպատակով և համապատասխանեցնել ծրագրի մշակումը՝ հաշվի առնելով անկանխատեսելի խնդիրները,
- հստակ պատկերացում կազմի, թե ինչ հմտություններ են անհրաժեշտ հետազոտություն կատարելու համար:

## **5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **ՀՀ քաղաքացիների ընդունելություն**

Ասպիրանտուրա կարող են ընդունվել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ունեն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Ասպիրանտուրայի ընդունելության համար դիմորդը ավարտական տարվա ընթացքում պետք է տարբերակված ստուգարքներ հանձնած լինի «Օտար լեզվու» և «Ինֆորմատիկա և համակարգչից օգտվելու հիմունքներ» առարկաներից՝ տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ ԿԳ նախարարության սահմանած ներքին շեմով բալային գնահատմամբ:

Ասպիրանտուրայի առկա ձևով ուսուցման համար մայիս ամսին, համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հատկացված տեղերի և առաջարկված ժամանակացույցի, ասպիրանտուրայի բաժնում կատարվում է դիմորդների փաստաթղթերի ընդունում, իսկ մասնագիտական քննությունները անցկացվում են հունիս ամսվա առաջին տասնօրյակի ընթացքում:

Ասպիրանտուրայի հեռակա ձևով ուսուցման համար փաստաթղթերի ընդունումը կատարվում է հոկտեմբեր ամսին, իսկ մասնագիտական քննությունները՝ նոյեմբեր ամսվա առաջին տասնօրյակի ընթացքում:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին կանոնակարգերով, իսկ ընդունելության մասնագիտական քննություններն անցկացվում են ՀՀ ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպություններում:

### **Օտարերկրյա ուսանողների ընդունելությունը**



յուն առկա ուսուցման ասպիրանտուրայի դեպքում	ապահովում ասպիրանտուրայի ընդունելության ժամանակ	ուսանողների հարաբերակցությունը
--	---	--------------------------------

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

### ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Առկա ուսուցմամբ հետազոտողի պատրաստման ծրագրի տևողությունը 3 տարի է, հեռակայինը՝ 4 տարի: Ասպիրանտական ուսուցումն իրականացվում է ասպիրանտի ուսումնառության անհատական ծրագրի համաձայն՝ պահպանելով ուսումնառության ավարտին վերաբերող պահանջները:

1.2 Ծրագրի հիմքում դրված է ասպիրանտի որակավորման աստիճանի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված 180 կրեդիտ գիտաուսումնական աշխատածավալը, որը առկա ուսուցման ձևում մեկ ուստարվա համար կազմում է 60 կրեդիտ, հեռակայում՝ 45 կրեդիտ: Առկա ուսուցմամբ ասպիրանտի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (60 կրեդիտ /2 կիսամյակ կամ 40 շաբաթ/ = 1,5): Մեկ կրեդիտը համարժեք է 30 ժամի:

1.3 Ուսումնական կառուցամասի աշխատածավալը կազմում է 58 կրեդիտ, իսկ հետազոտական կառուցամասինը՝ 122 կրեդիտ: Ծրագիրը բաղկացած է 1-6 կրեդիտ աշխատածավալով դասընթացներից և ուսումնական ու հետազոտական մոդուլներից, ինչպես նաև 110 կրեդիտ ծավալով գիտահետազոտական աշխատանքից:

### ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1 Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է ընդհանուր պատրաստվածության և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, պրակտիկաներից, ատեստավորումից. առաջինը ծառայում է հետազոտողի որակավորման համար անհրաժեշտ ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երկրորդ կրթամասն ապահովում է

հետազոտողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ երրորդը՝ նրա գիտամանկավարժական հմտությունների զարգացումը:

2.1.1. Ընդհանուր պատրաստվածության կրթամասի աշխատածավալը 20 կրեդիտ է: Այս կրթամասի դասընթացները նպատակաուղղված են ասպիրանտի ընդհանրական (փոխանցելի) կոմպետենցիաների ձևավորմանը: Այն ներառում է 1-6 կրեդիտ աշխատածավալով հինգ պարտադիր և երկու ընտրովի դասընթաց:

2.1.2. Մասնագիտական պատրաստվածության կրթամասն ընդգրկում է երեք մասնագիտական դասընթաց (12 կրեդիտ) և 10 կրեդիտ ծավալով որակավորման քննություններ մասնագիտությունից (երկու քննություն՝ յուրաքանչյուրը 5-ական կրեդիտ):

2.1.3. Պրակտիկաները ծրագրում ունեն 10 կրեդիտ աշխատածավալ, որից մինչև 6 կրեդիտ կարող է հատկացվել հետազոտական բնույթի պրակտիկաներին, իսկ մնացածը՝ մանկավարժական: Վերջինս նախատեսում է բակալավրիատում գործնական և սեմինար պարապմունքների, լաբորատոր աշխատանքների անցկացում, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքի ղեկավարում: Պրակտիկաները կազմակերպվում են ասպիրանտի և գիտական ղեկավարի կողմից համատեղ կազմված և հաստատված ծրագրով:

2.1.4. Ամփոփիչ ատեստավորմանը ծրագրում հատկացվում է 6 կրեդիտ: Այն հնարավորություն է տալիս ասպիրանտին թեկնածուական ատենախոսությունը հանրային պաշտպանությանը ներկայացնելու թույլտվություն ստանալ:

### ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Ասպիրանտը ծրագրի կատարման արդյունքում պետք է կուտակի առնվազն 150 կրեդիտ, որը ներառում է նրա գիտակրթական ծրագրի ինչպես հետազոտական, այնպես էլ ուսումնական բաղադրամասերը (ներառյալ ամփոփիչ ատեստավորումը (6 կրեդիտ):

Ուսումնառության անհատական ծրագրի կրթական մասը (ներառյալ նաև ատեստավորումները) պետք է կազմի 58 կրեդիտ, որից 20 կրեդիտը հատկացվում է ընդհանուր պատրաստվածության կրթամասին, 22 կրեդիտը՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասին, իսկ մնացած 16 կրեդիտը՝ պրակտիկաներին և ամփոփիչ ատեստավորմանը:

Ծրագրով կատարված հետազոտական մասին պետք է հատկացվի առնվազն 92 կրեդիտ, որից 12 կրեդիտը պետք է հատկացվի գիտական սեմինարներին և աշխատաժողովների մասնակցությանը, իսկ մնացած 80-ը՝ ինքնուրույն

գիտահետազոտական աշխատանքին և թեկնածուական ատենախոսության պատրաստմանը:

Գիտությունների թեկնածուի աստիճան շնորհվում է Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուական ատենախոսության վերջնական հաստատման դեպքում:

## 7. ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Գիտական ղեկավար, որպես կանոն, կարող է լինել տվյալ բուհում (կազմակերպությունում) աշխատող գիտությունների դոկտորը կամ նախարարության սահմանած կարգով ԲՈՀ-ի թույլտվության դեպքում՝ գիտությունների թեկնածուն: Հարակից մասնագիտությունների սահմանում գիտական հետազոտություններ կատարելիս կարող է հաստատվել համադրելավար: Համադրելավարի թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է ԲՈՀ ներկայացնել համապատասխան գիտական կազմակերպության ղեկավարի դիմումը, տպագրված գիտական հոդվածների ցանկը և քաղվածք գիտխորհրդի արձանագրությունից: Դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ԲՈՀ-ը որոշում է կայացնում: Ղեկավարման թույլտվություն է տրվում այն թեկնածուներին, որոնք համապատասխան թեմայից ունեն առնվազն 30 գիտական հոդված:

Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ղեկավարել 5-ից ոչ ավելի ասպիրանտի և հայցորդի:

ՄԿԻ-ում գիտական ղեկավարն ընտրվում է գիտխորհրդի սահմանած հետևյալ չափանիշների հիման վրա՝

1. Հետազոտական գործունեություն, որը չափվում է գրախոսվող պարբերականներում հրապարակումների թվով, տպագրված գիրք/ գրքի գլուխ, միջազգային գիտական միջոցառումներին մասնակցություն:

2. Բավարար ռեսուրսներ և ֆինանսավորում, որը չափվում է տեղական և միջազգային գործակալությունների կողմից ֆինանսավորվող նախկին և ընթացիկ ծրագրերի թվով:

3. Ասպիրանտների ղեկավարման նախկին փորձ (չի պահանջվում «սկսնակ» ղեկավարների դեպքում):

Երիտասարդ գիտնականները սկսում են ղեկավարի կարիերան գիտությունների թեկնածուի աստիճան ստանալուց հետո՝ նախ ղեկավարելով մագիստրոսական թեզերը, իսկ այնուհետև աշխատելով ասպիրանտների հետ որպես համադեկավարներ:

Բացի այդ, ասպիրանտին ղեկավարում են ոչ ֆորմալ մենտորական խմբում, որը ձևավորվում է ՄԿԻ ղեկավարների կազմից (սովորաբար 3-4 համադեկավար): Մենտորական խումբը սերտ համագործակցում է ասպիրանտի և վերջինիս ղեկավարի հետ, մշտադիտարկում է ուսումնառության առաջընթացը՝ անկախ տարեկան ատեստավորումից, և մասնակցում է ղեկավար-ասպիրանտ տարաձայնությունների հարթեցմանը:

## **8. ԹԵԿՆԱԾՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՅՈՒՐՈՐԻՆԱԿ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ**

Թեկնածուական ատենախոսությունը պետք է լինի ինքնուրույն կատարված գիտական աշխատանք, որը պետք է համապատասխանի ակադեմիական բարձր չափանիշներին՝ հետազոտության հարցերին, հասկացությունների ուսումնասիրությանը և ներկայացման մեթոդաբանական, տեսական և էմպիրիկ հիմքին և ձևին:

Թեկնածուական ատենախոսությամբ որոշվում է, թե ասպիրանտն իրականացրել է արդյոք ինքնուրույն, յուրօրինակ և գիտական նշանակություն ունեցող հետազոտություն և քննադատորեն գնահատել ուրիշների կատարած աշխատանքը:

Ասպիրանտները պետք է ապացուցեն, որ իրենց հետազոտության արդյունքները ճանաչված են տեղական և միջազգային գիտական ոլորտներում:

Նախքան հանրային պաշտպանությունը ասպիրանտներից պահանջվում է իրենց աշխատանքը տպագրել սահանված թվով հոդվածների տեսքով՝ հրապարակելով միջազգային ճանաչում ունեցող գրախոսվող պարբերականներում, տեղական պարբերականներում և գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Ատենախոսության ամբողջականությունը, յուրօրինակությունը և գիտական նորույթը գնահատվում են գրախոսության բազմակի փուլերով, որոնք իրականացնում են հետևյալ մարմինները՝

- Ղեկավարող և մենտորական թիմ

- Գիտխորհրդի կողմից նշանակված երկու ներքին գրախոս
- Գիտխորհուրդը՝ նախապաշտպանության միջոցով

Ատենախոսությունը թույլատրվում է պաշտպանության միայն գրախոսության բոլոր փուլերի դրական եզրակացությունը ստանալուց հետո: Նախապաշտպանությունից հետո ասպիրանտը հետևում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված ընթացակարգերին:

### 9. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայումս չկա որևէ փաստաթուղթ, որ կանոնակարգի ասպիրանտի տված գնահատականն իր ուսումնառության որակին: Ասպիրանտին գնահատում է գիտական ղեկավարը, նա գնահատվում է նաև տարեկան ատեստավորման ժամանակ, սակայն ինքը՝ ուսանողը, ոչ մի կերպ չի կարող գնահատել իր ուսումնառության որակը:

Ներկա իրավիճակ	Քայլեր	Ցուցիչներ
Ասպիրանտին գնահատում է գիտական ղեկավարը, նա գնահատվում է նաև տարեկան ատեստավորման ժամանակ:	Ուսանողի կողմից ասպիրանտական ծրագրի իրականացման գնահատման եղանակների մշակում	Ծրագրի տարեկան գնահատումը ուսանողների կողմից

### 10. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՄԿԻ-ը լայնորեն ինտեգրված է միջազգային գիտական տարածքին և համագործակցում է մի շարք միջազգային հեղինակավոր գիտական կենտրոնների հետ, ինչը խթանում է ապսիրանտների շարժունությունը: Ասպիրանտներին խրախուսում են դիմել կարճաժամկետ դրամաշնորհային կամ կրթաթոշակային ծրագրերի՝ իրենց հետազոտության մի մասը գործընկեր կազմակերպություններում անցկացնելու և իրենց ատենախոսության թեմային առնչվող ոլորտներում միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

Բացի այդ, գիտահետազոտական դրամաշնորհներին դիմելիս գիտական ղեկավարներից պահանջվում է ֆինանսական միջոցներ հատկացնել ուղևորության համար, եթե կա այդպիսի հնարավորություն: Վերադարձից հետո յուրաքանչյուր ուսանող պետք է գիտխորհրդում հաշվետվություն ներկայացնի՝ կատարված գործողությունների և ստացված արդյունքների մասին:

Ներկա իրավիճակ	Քայլեր	Ցուցիչներ
Գիտաժողովների մասնակցության ցուցանիշը բարձր է	Ասպիրանտների ուսումնառության ընթացքում խրախուսել մասնակցությունը գիտաժողովներին	Տեղական և միջազգային գիտաժողովներին մասնակցած ասպիրանտների թիվը
Խրախուսվում են կարճաժամկետ գիտական այցերը	Խրախուսել կարճաժամկետ գիտական այցերը	Կարճաժամկետ գիտական այցերին մասնակցած և արտերկրում հետազոտություն կատարած ասպիրանտների թիվը
Երկարաժամկետ գիտական այցելությունները և համատեղ ասպիրանտական ծրագրերի իրականացումը խնդիրներ են առաջացնում	Մշակել կանոնակարգեր՝ երկարատև գիտական այցերի վերաբերյալ	Շարժունության, գիտական արտադրանքի և թեզի թեմայի կապի արդյունավետության գնահատումը

## 11. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որակի ապահովման և կառավարման գործընթացներն էական են ասպիրանտական ծրագրերի բարեհաջող իրականացման համար: Ներկայումս գործընթացների համարժեք գնահատման համար չկան պաշտոնական ինստիտուցիոնալ ուղեցույցներ: Անհրաժեշտ է մշակել այդպիսի ընթացակարգեր ու ուղեցույցներ՝ համակարգված և շարունակական գնահատման համար:

Ներկա իրավիճակ	Քայլեր	Ցուցիչներ
Չկան ինստիտուցիոնալ ուղեցույցներ	Ասպիրանտական ծրագրի գնահատման ուղեցույցների և ձևերի մշակում	Մշակված ուղեցույցներ
	Ընթացիկ և ավարտված ծրագրերի գնահատում գիտքարտուղարների կողմից	Գիտքարտուղարների հաշվետվություն՝ գնահատման արդյունքների մասին
		Զեկույցների հրապարակում ինստիտուտի կայքում